

2-րդ յաւելուած «Մուրնի»

Բ Բ Ե Տ Հ Ա Ր Տ

# ԻՆՆԵՍՈՒՆ ԵՒ ՌԻԹԸ ՏՎԻ

Ա Ր Ա Զ

(Պ Ա Տ Մ Ա Խ Ա Ծ Ք)

Թարգմ. Ս. Լիսիցեան



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Կրաց Հրատ., Ընկերութեան || Տիպոգրիա Грузинск. Изд. Т—ва

1902

Дозволено цензурою, Тифлисъ, 21 ноября 1902 года.

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

---

Առանտեան ովկիանոսի այն կողմը զարգացել է մի ինք-  
նօրինակ կեանք, որ իր հիմնական գծերով տարբերում է եւ-  
րոպական կեանքից։ Այնտեղ նոր հայրենիք գտան Հին Աշխար-  
հի ամեն տեսակ դժգոհ տարբեր՝ և՛ նրանք, որոնք տանը չէին  
կարող հաշտուել իրանց նիւթական վիճակի հետ ու որոնում էին  
ընդարձակ հողեր և հարստութիւններ, և՛ նրանք, որոնց խեղ-  
դում էին քաղաքական և հասարակական պայմանները, և՛ նրանք,  
որոնց հալածում էին կրօնական հայեացքների համար,—բոլորն  
էլ ուժեղ, անընկենի կամքի տէր մարդիկ Կուսական հողի  
վրայ, ազատ ամեն աւանդական կապերից, նրանք ուզածի պէս,  
իդէալին հետևելով, կազմակերպեցին իրանց ընտանեկան և  
հասարակական կեանքը և առաջացրին այն անհատական, ձեռ-  
նարկու, ինքնազլուխ բնաւորութիւնները, որոնք յափշտակում  
էին եւրոպացու երեւակայութիւնը Մայն Ռիդի և Ֆենիքօր  
Կուպերի գրուածքների մէջ։ Բայց այս արկածագիր վիպասան-  
ների հերոսները մի մի չափազանցութիւն են թէեւ հէնց այդ  
իսկ չափազանցութեան մէջ գրաւէիչ Միայն մի քանի ամիս  
սրանից առաջ վախճանուած ամերիկացի հեղինակ Բրետ Հարտն  
էր (ծն. 1839) առաջինը, որը մեծ և փոքր վէպերի ու մանրա-  
նկարների մէջ պատկերացրեց նոր Աշխարհի (Միացեալ Նա-  
հանգների) բնաւորութիւնները այնպէս, ինչպէս որ նրանք կան,

ստեղծագործական խորին ճշտութեամբ։ Ուղիղ է, նա էլ մեծ նշանակութիւն է տալիս իր գրուածքների մէջ արկածներին և պատահականութեանը, բայց ճշմարտութիւնը նրա համար ամենից վեր է։ Պարզ է, թէ ինչու նրա մօտ գտնում ենք ոչ միայն Հիւսիսային Ամերիկայի, մանաւանդ Կալիֆորնիայի, անօրինակ բնութեան շքեղ նկարագրութիւններ, այլ և ամբողջացրած բնաւորութիւններ և նուրբ հոգեբանական վերլուծութիւններ։ Իբրև ամերիկացի, նա չէր կարսող կանգ չ'առնել և այն մեծ անձնաւորութեան վրայ, որը ամբողջովին, իր բոլոր առաւելութիւններով, մարմնացնում էր ամերիկական բնաւորութեան լաւագոյն կողմները և որի մէջ անհատականութիւնը զարգացած էր աւելի, քան թէ որևէ է մէկ ուրիշի մէջ։ Այդ խոժոու դէմքը Վաշինգտոնն է՝ «Միացեալ Նահանգների ստեղծողը»։ Բրետ Հարտը իր ունեցած անհուն ակնածանքը դէպի այդ անձնաւորութիւնը ցոյց է տալիս նոյնպէս և «Ձննըսուն և ութը ատրի առաջ» վէպիկի մէջ։

Ալեգանեան լեռների և Ասլմնտեան սվկիանոսի մէջտեղ, խոր գետերով կտրտուած, պտղաւէտ երկրում, արդէն XVII դարի վերջերքից, անզիւացիք հիմնել էին մի շարք գաղութներ, թուով տասներկը, որոնցից ամեն մէկը բաժանում էր կոմսութիւնների, իսկ կոմսութիւնները համայնքների։ Ամեն մի համայնք անկախ էր կառավարում և ընդարձակ տեղական ազատութիւն էր վայելում։ Բարձրագոյն իշխանութիւնը պատկանում էր կոմսութեան պատղամաւորներին, որոնք կառավարում էին երկիրը կայսերական նահանգպալետի հսկողութեան ներքոյ։ Գաղութների նիւթական վիճակը ակսեց արագ բարեւրածուել մանաւանդ XVIII դարում։ Միաժամանակ ծաղկեցին զիտութիւններն ու իրաւաբանութիւնը, բազմացան դարողներն, և սկզբնական ուսումնական գործէ պարտադիր։ Առաջադիմութեանը խանգարում էին սակայն մի քանի հանգամանքներ, օրինակ, կանաք շատ սակաւամիւ էին և մի քանի դաշտականներ 75 դոլլար կամ 150 ֆունտ ծխախոս էին ուղարկում Եւրոպա այնտեղից «մաքուր և անարատ» կին բերելու համար։ Միւս կողմից, Անգլիան, իր արդիւնագործութիւնը ապահովեցնելու համար, արգելում էր ամերիկացիներին դործարաններ հիմնել, «Եթէ միայն համարձակուեն մի գուլպա կամ մի պայտ շինել, ցոյց կը տամ ես նրանց մեր զօրութեան ամբողջ ոյժը», ասում էր անգլիական նախարարապեաններից մէկը։ Գաղութները տալիս էին մայր-երկրին, Անգլիային, Յմբիլիոն օժանդակու-

թիւն, որը սակայն վաւերացւում էր ամերիկացիների յօժարակամբ վճռով երբ Նախարար Ըօլպօլին առաջարկեցին նոր հարկեր մտցնել գաղութներում, նա պատասխանեց: «Այդ հոգաբ թողնում եմ իմ հետնորդներից նրան, ով աւելի քիչ կը սիրի իր հայրենիքը»:

Եօթնամեայ պատերազմի ժամանակ ամերիկացիք օգնում էին Անգլիային և այդ նպատակով, զօրք ու դրամ ուղարկելու համար, աւելի սերտ միութիւն հաստատեցին իրար մէջ, բայց երբ 1763 թուին անգլիական վերին և ստորին պալատները, գրեթէ միաձայն, առանց գաղութների համաձայնութիւնը հարցնելու, որոշեցին մայնել Ամերիկայում արքունի զրօշմուած թուղթ, ամերիկացիք բողոքեցին դրա դէմ ոչ միայն զրչով, այլ և դործով. Նրանք գրաւեցին այն նաւերը, որոնք բերել էին զրօշմուած թուղթը, այրեցին բոլոր հակերը և խօսր կապեցին իրար հետ չը զործածելու անգլիական ապրանքները, մինչև որ օրէնքը չը վերացուի. Երբ 1766 թ. օրէնքը վերացուեց, ամերիկացոց ցնծութեանը չափ չը կար: Բայց մէկ տարի անցած անգլիական պարլամենտը ինքնազլուխ նոր տուրքեր նշանակեց թղթի, ապակու, ներկի, պղնձի և թէյի վրայ: Ճշմարիա է, շուտով այդ հարկերը ոչնչացրին, բայց թէյի հարկից, բայց ամերիկացիներին այս զիջումը չը գոհացրեց, նրանք հրաժարուեցին թէյ գործածելուց: «Մենք ընդպիմադրում ենք ոչ թէ նրա համար,— ասում էր Վաշինգտոնը, — որպէս զի չը վճարենք աւելորդ 6 սու մէկ ֆունտ թէյի վրայ, այլ մեր աղատութեան սկզբունքի համար»:

Բայց գետ ոչ ոք չէր մտածում անջատուել մայրերկրից, աշխատում էին խոռվութիւնը վերջացնել համաձայնութեամբ. Սակայն ընդդիմադրութիւնը սաստկանում էր, ամերիկացիք բացարձակ կերպով ատելութիւն էին ցոյց տալիս դէպի անգլիական զինուորները, «դէպի այդ սրիկաներն և ծովի խեցգետինները»: 1773 թ. Բօստոն քաղաքի նաւահանգիստը մտաւ մի ահազին նաև թէյով, բնակիչները ծպտուած մտնում են յանկարծ նաւը ու ամրող բեռը շարտում ծովը Անգլիան իշխանապետ է նշանակում Մասաչուսետի նահանգապետին: Ամերիկացիք առաջարկում են թէյի ամրող արժեքը, առաջարկը մկրժւում է, պահանջւում է անպայման հնազանգութիւն: Ֆիլադելֆիայում հաւաքուած վեհաժողովը այն ժամանակ, գետ ևս Անգլիայից չը խզուած, հրաժարակում է մի հրովարտակ մարդկային իրաւունքների մասին և յայտարարում բոլոր մարդկանց հաւասարու-

թիւնը, 1775 թ. Անգլիայի Գէորգ թագաւորը ուղարկում է Բաստօնի վրայ զօրք ամսրիկացի կամաւորները, Վաշինգտօնի հրամանատարութեամբ, ջարդում են այդ զօրքը: Այսպէս սկըսումէ պատերազմը:

Թոլոր գաղութները յարուեցին Ֆիլադելֆիայի հրովարտակին: Վեհաժողովը նորից գումարուեց և 1776 թ. յայտարարեց անկախութիւն և տասերեկ դադութների միութիւնը: ամեն մի գաղութ պահպանում էր ներքին քաղաքական և կրօնական ազատութիւն: Վաշինգտօնը ստացաւ իշխանապետական լիազօրութիւն:

Զօրջ Վաշինգտօնը (1732—1799) ծնուել էր Վիրգինիա նահանգում և ունենալով ընդարձակ կալուածներ՝ պարապում էր գիւղատնտեսութեամբ: Նա մասնակցել էր արդէն Կօթնամայ պատերազմին և արտակարգ զինուորական ընդունակութիւններ ցոյց տուելը Վերադանալով գիւղը, նա ընտրուել էր նախ Վիրգինեան պարլամենտի անդամ և աչքի ընկել իր հեռատես խելքով և հաստատ ընակորութեամբ: Երբ սկսուեցին անբաւականութիւններ գաղութների և մայր-երկրի մէջ, նա առաջինն էր, որ իր ճայնն էր բարձրացրել գաղութների իրաւունքները պաշտպանելու համար: Այժմ, իրեն զօրքի ընդհանուր հրամանատար, նա պէտք է գէնք գտնէր, պատերազմական մթերք, պաշարեղէն մի անկարգ, անկանոն զօրքի համար, որ բաղկացած էր 14 հազար դէսից-դէնից եկած մարդկանցից: Մէծ դժուարութեամբ նա կարգապահութիւն մտցրեց այս ամրութի մէջ, բայց լաւ էր հասկանում, որ այսպիսի ոյժերով կարող է միայն պաշտպանուել, դիտել և միայն յանկարծակի յարձակուել թշնամու վրայ: Ոչ մէկ անգամ նա չը յաղթեց հակառակորդին բաց դաշտում, սակայն իր պաշտպանողական և դիտողական սիստեմով այնտեղը հասցրեց նրան ութը տարուայ ընթացքում, որ նա չէր համարձակւում այլ եւս որևէ է մեծ արշաւոնք ձևոնարկելու: Քանից անգամ նա պարտուել է, և կրկին զօրք հաւաքել ու կանգնել թշնամու դէմ: Երբեմն նրա գնդի մէջ մնացել է միայն 2000 հոգի: այն էլ ցրտին, սովոր, պատերազմական մթերքի պակասութեանը: Անթարկայ, սկսուել նն խռովութիւններ, գլուխ են բարձրացրել ըմբուռներ, բազմացել են փախստականներ: Բայց նա չէր ընկնւում և բնաւորութեան ոյժով և անձնազնիութեամբ առաջ էր մղում կրիւը: 1778 թ. ամերիկացիք կարողացան ոգեւորել ֆրանսիացոց և նրանց կառավարութեանը ու նրանցից օգնութիւն ստանալ:

Այս դաշնամիջութեանը շուտով միացաւ և Սպանիան։ Վերջապէս 1788 թ. Վերանալում (Պարիզի մօտ) հաշտութիւն կապուեցա Սնգլիան ճանաչեց Միացեալ Նահանգների անկախութիւնը։ Բայց պատերազմի վերջին տարին վեհաժողովից անբաւական եղողների թիւը այնչափ էր շատացել ամերիկական զօրքի մէջ, որ քիչ էր մնում փոխուէր բացարձակ ապստամբութեան, որովհետեւ վեհաժողովը չէր մտածում զինուորների ապագայի մասին։ Վաշինգտոնին նոյն-իսկ առաջարկողներ եղան՝ այդ գժգոհութիւնից օգտուելու և զօրքի գլուխ կանգնելով՝ միապետութիւն հիմնել։ Նա մերժեց այս անարդ առաջարկը։ Եւ երբ 1783 թ. անգլիական զօրքերը բոլորովին հեռացան Նիւ-Եօրքից, նա ցրուեց զօրքը, վեհաժողովի ներկայութեամբ հրաժարուեց իր լիազօրութիւնից և վերադարձաւ իրեւ սոսկալուածատէր իր Մունտ-Վերնօնը։ «Թաթախման գիշերը—գրում էր նա այստեղից իր մէկ բարեկամին,—այս տան դուռը մտաւ մի մարդ, որը ինը տարով ծերացել է։ Ես սկսում եմ զգալ ինձ գոհ և ազատ ամեն հասարակական հոգսերից։ Յոյս ունեմ օրերիս մնացորդը անցկացնելու, ազնիւ մարդկանց հետ բարեկամական յարաբերութիւններ պահպանելով և ժամանակս տնային հոգսերին նուիշելով։ Երկրագործի կեանքը ամենաքաղցր է։ առանց ոչ ոքի նախանձելու գոհ եմ ամենքից։ Այս հոգեկան վիճակի մէջ ես խաղաղ կիշնեմ կեանքի գետով, մինչեւ որ պառկեմ նախահայրերիս կողքին։» Սակայն Վաշինգտոնին չաղողեց երկար վայելելու այս հանգստութիւնը, նա պիտի այս հանգստութիւնը զոհէր, որպէս զի «առաջինը լինի խաղաղութեան մէջ, որպէս առաջինն էր եղել պատերազմի մէջ»։

Հասկանալով որ հայրենիքը պէտք ունի մի ամուր կազմակերպութեան և կենդրոնացած գարչութեան՝ նա հակուեց «միութենականների» կուսակցութեան կողմը և, ընտրուելով ընդհանուրական ժողովի պատգամաւոր, նպաստեց այն դաշնագրութեան խմբագրուելուն, որը մինչեւ օրս գործադրուում է։ Նա ընտրուեց նահանգների առաջին նախագահ և այս պաշտօնի մէջ յետոյ կրկին վերընտրուեց։ Իսկ երրորդ անգամ ընտրուելուց նա հրաժարուեց և ազգին ուղղեց մի հրաշալի գիրում, որի մէջ աւելի պայծառ փայլում է նրա օրինակելի քաղաքացի լինելը։ Նա մեռաւ 1799 թ., Երջանիկ իր ամուսնութեան մէջ, բայց անզաւակ լինելով, նա մեծ զումարներ թողեց յօդուտ գպրոցների և ազատութիւն տուեց իր ստրուկ նեգրերին։ Թաղուած է Մունտ-Վերնօնում։

Յրեա Հարտի ներկայ վէպիկի նիւթը առնուած է այսնշանաւոր ժամանակի այն միջոցից, երբ նոր էին սկսւում բանակութիւններ Սպանիայի հետ՝ Անգլիայի դէմ յարձակողական դաշն կապելու համար։

US. I.

---

## ԻՆՆԸՍՈՒՆ ԵՒ ՌԻԹԸ ՏԱՐԻ ԱՌԱՋ

### I

Ժամանակը՝ 1779 թուի ապրիլը, տեղը՝ Մօրիստառունը  
Նիւ-Ձերսէում \*):

Եատ ցուրտ էր: Հիւսիս-արևելեան քամին ամբողջ օրը  
փչում էր, պինդ դանդուածք գարձնելով ջրալի ցեխը Բասկին-  
րիշի ճանապարհին: Հեծելազօրի պայտերի հետքերը, պաշարա-  
կիր սայլերի ակօնները և թնդանօթների անիւների խոր շափկ-  
ները սուզելով ճշգրիտ ժամանակադրութիւն էին ներկայացնում  
այն ամնի, ինչ որ անցել, գարծել էր այս ճանապարհով մինչեւ  
երեկոյ Սուացէ լուրաները կախ էին ընկել չափարների վրայից,  
իսկ արծաթափայլ եղեամք ծածկում էր հին թիւկեների կեղեւն  
ու մերկացած քարերը, կարծես բնութիւնը իր զգեստները մաշած  
լինէր կոների ու ծնկների վրայ, երկար ժամանակ սպասելով  
ուշացած գարնան: Առաւատեան ջերմութիւնից փափկած սակա-  
ւաթիւ տնրեւները նորից կոշտացել էին ու ողբայի ձայնով  
ճոճում էին քամու բռնկումների ժամանակ, ամառուայ մօտե-  
նալու վերջին յոյսը ոչնչացնելով:

Տեղ-տեղ, ճանապարհի ամերին, երեւում էին քանդուած  
չափարներ ու շրջապատեր, իսկ աւելի հնոու ձգուում էին ձիւ-  
նատառ զաշենք, որնց վրայ ցիր ու ցան էին եղած սայլերի  
բնկորներ, շորերի, ձիւառքերի և այլ այսպիսի մնացորդներ,  
իբրև պարզ ապացոյց, որ այստեղ նորերս բանակ է եղել ու  
անցել է մարդկային մեծ ամրոխ: Այս ու այնտեղ դեռ

\*): Նիւ-Ձերսէ նահանգը գտնում է Դելաւար և Հուան գետերի մէջ-  
տեղ, Հիւսիսալին Ամերիկալի արևելեան ափին. 1664-ից պատկանում էր  
անդիացիներին, բայց 1776 թուին մտաւ 13 զաղութների միութեան մէջ.

պահորնուել էին կոսիտ շինոծ հիւզեր և արագ կառուցած, չը վերջացրած բերգաթմբեր Կիսով չսոփ խանդարուած խրամափ յատականգ փորսող առողջ ազուէսր կամ հոգաթմբի յետեւում թագ կեցող զայր նշան էին աւերմունքի ու մարդկացին կեանքի բացակացութեան:

Մայր մտնող արեւի զմզոյն ճառագայթները փոքր ու փոքր անհետանում էին երեկոյեան երկնքի վրայից, Օրանեան լիսների հետաւոր զագաթները պատում էին խաւարուի, մինչեւ անզամ Վատանօնդի ամենամօտիկ լոնչերը, որոնք ծածկուած էին նուծիների երկար շարքերով, մի սե զանգուած էին ներկայացնում: Գիշերը հասնելուն՝ անխախտ խաղաղութիւն արեւեց: Հեր լուսում աերեւների սոսափիւնը, սասած ասեղները չեին թափուում մերկացած ձիւզերից ու զարտուր ծառերը պահպանում էին մեսերային լսութիւն: Գետնի վրայ և օդի մէջ այնովէս խաղաղ էր, որ ցամաքային զօրագնդի մերձաւոր պահպաները կարող էին լսել այն պայտերի զնողոցը, որոնք խուլ ձայնով փշրաւում էին բարակ և պղտոր սառուցը մեծ ճանապարհը խզմզող ակօնների վրայ:

Այս անխորժ հանգամանքը կամ զուցէ ճանապարհի զմուարութիւնը զայրացնուում էին ձիւաւորին, որին դեռ ծածկում էր շրջապատող մթութիւնը, նրա երեալուց շատ առաջ, արդէն լսելի էր նրա ձայնը՝ որ ոնիծում էր ճանապարհը, ձիւն, մերձաւորներին և ամբողջ երկիրը զկամաց, սատանի զաւակ: Մի սայթաքիր իմի ծնունդը Անիծուի ճանապարհը, անիծուի այստեղի ժողովուրդը: Աւաղակներ, չեն կարող ճանապարհը նորոգել:

Յանկարծ ձիւաւորի կերպարանքն ու նրա ձին պարզորոշ նկատուեցին լեռան կատարի վրայ ու նոյնական անսպասելի կերպով անհետացան: Պայտերի զնողոցը մարեց:

Անծանօթը ծոռեց դէպի ամազի ճեմելիքը, որ ծածկուած էր կուսական ձիւով Ճանապարհի մէկ ափով ձգուող շրջապատը աւելի լաւ էր պահպանուել, քան թէ զաշտերի չափարները: Անցնելով ճեմելիքի կէսից աւելին, ձիւաւորը վայր թռաւ ձիւց և կապեց ծառից: Յետոյ կամացուկ, զգուշութեամբ ճասաւ մինչեւ ճեմելիքի ծայրը, որտեղ մի փոքրիկ ագարակի տանիքի պատուհանում ճրագ էր երեւում: Յանկարծ այն ճրագը ճանգաւ Անծանօթը կանգ առաւ անհամբերութեամբ և բոպէական տատանումից յետոյ յետ զարձաւ մինչեւ քարէ շրջապատի այն տեղը, որտեղ նրա վրայից երեւում էր ախոռատան կտուրը: Մօտիկ մի ահաղին թէղօչ ծառ ձգում էր իր անտերեւ ստուե-

րը պատի ու շրջակայ ձիւնի վրայ։ Անծանօթը կանգնեց ծառի  
մուալլ հովանու տակ։

Թէեւ այդ բովէին ոչ մի առանձին ոօմանտիկ բան չը  
կար այդ ձիւնով ու եղեամով ծածկուած ծառի մէջ, բայց մի  
ինչ որ տարօրինակ, սանտիմենտալ բան էր զգացւում այն քա-  
րերի մէջ, որոնք քանդուած էին պարխսպից ու դարսուած մի  
կովիտ նստարանի ձևով, նոյնը աւելի ևս զգացւում էր եղեամի  
տակից ծառի կեղեւի վրայ նշմարուող այս՝ «Յաւիտեան քոնը»  
մակագրութեան մէջ, որ փորագրուած էր մարդկային սրտի մի  
նկարի զլիին։

Սակայն անծանօթը նայում էր միայն ախոռատան կտուրին  
ու նրա յետեւում տարածուող լայնարձակ դաշտին։ Անցյաւ հինգ,  
տասը բովէ։ Լուսնեակը կամաց զուրս էր լողում։ Օրանեան  
լեռների սեւ շղթայի յետեւից ու նայում անծանօթի վրայ  
մի փոքր շառագունած, կարծես ինքն էր նրան տեսակցութիւն  
նշանակողը։

Այսպէս լուսաւորուած կերպարանքն ու դէմքը պատ-  
կանում էր գեղեցիկատեսիլ, բարձրահասակ, մօտ երեսուն տա-  
րեկան մի տղամարդու, որը այնպիսի պատերազմիկ տեսք ունէր,  
որ առանց ուսնոցների էլ կարելի էր ճանաչել, որ ցամաքային  
զօրագնդի կապիտանն էր լինելու։ Սակայն այդ բովէին դէմքի  
արտայայտութիւնը հակասում էր նրա քաջարի կանգնուածքին։  
Նրա բոլոր դիմագծերի մէջ արտայայտում էր ինչ-որ՝ նրա ոյ-  
ժին անհամապատասխան նեարդային անհամբերութիւն, որ  
քանի զնում սաստկանում էր։ Վերջապէս նրա զրգուումը այն-  
տեղ հասաւ, որ նա սկսեց ոտուզ ցիր ու ցան անել պատից  
թափած քարերը։

—ՄՌԵ—ՌԵ։

Կապիտանը ցնցուեց։ Նա չը վախեցաւ, բայց նրան տա-  
րօրինակ թուաց, ինչպէս կարող էր կովը այդպէս առանց ձայն  
հանելու մօտենալ հէնց պատին։

—ՄՌԵ—ՌԵ։

Նա կպաւ պատին ու արտասանեց կէս-ձայնով։

—ՄՌԵ, Բասաի։ Սուս, Մօլի։

—ՄՌԵՌԵ, —լսուեց յանկարծ, բայց իսկոյն խլացաւ կա-  
նացի արծաթահնչիւն ծիծաղից։

—Տանկիվելլա, —բացականչեց անծանօթը և բռնազրոսիկ  
կերպով սկսեց հետը ծիծաղել։

—Բատ, ինչ էիք կարծում, —արտասանեց միեւնոյն ձայնը  
և շրջապատի վրայ երեւաց գեռահաս աղջկայ գեղանի գլխիկը,  
—դուցէ դուք կարծում էիք, որ ես ձեզ ամբողջ գիշեր կը սպա-

ուսմ կամ կարծում էիք, որ ես ձեր անունը կը տամ, ամբողջ ձայնովս կը կանչեմ—կապիտան Ալլան Բրիտանը.

—Շշ, Տանկֆելան:

—Ալլան Բրիտանը, Կանեկաթիկուտի գորարաժնի կապիտան, —շարունակեց գետահառ ազջիկը, կոթնելով պատին, —պատին նեման ներկայանալու, ձեր խնարճ սպառահին ու որտակից բարեկամը:

Կարճառան կառից յետոց կապիտան Բրիտանը տիրացու օրիորդի ձեռներից մէկին, և նա զազարեց ընդդիմադրելուց:

—Ամեն մէկին թոյց չեմ տայ այդ, —տաց, շրմանքները ու ացնելով, զեղեցկանին, —թէկուզ ձեր Մօրփատառնի պարահանդէնների փուտած տիկինները իմ վարքը մնալաւշաճ համարէն:

—Խատարկ բաներ են, իմ ազանեակո—պատախանեց կապիտանը, որը արդէն հեծել էր պատի վրայ ու զրկել ազջկան, —բայց—աւելացրեց նա, բանելով նրա կղակից ու այնպէս շուռ տալով նրա դէմքը, որ լուսնեակը լիովին լուսաւորէ, —ինչու դուք պատահանի ճրազը հանդցրիք. ինչ է պատահել:

—Մեզ մօտ անսպասելի հերքեր են եկել, կոմա...

—Որ և է անիծուած հնաշնցի<sup>\*)</sup> կը լինի...

Բրիտանը խանդոս աչքով նայեց ուղղակի դեռահաս ազջկայ աչքերի մէջ լուսնեակը նոյնականացնելում էր նրա վրա քնքոյց, հանգարտ ու վասահ:

—Աչ, Ալլան, նա հասարակ զազթական չէ, այլ ազնուատոհմ օտարազդի արսորական Ազնուական սերունդից է...

—Ազնուական չէ ու ինչ, —պատախաննեց արհամարհանգով Բրիտանը, —վեհաժողովը<sup>\*\*)</sup> վհուել է, որ բոլոր մարդիկ մնը երկրում իրար հաւասար են ու ազտան:

—Այդ սուտ է, Ալլան, —պատախաննեց Տանկֆելան, յօնքերը կիտելով, —մինչեւ անզամ հորթերը չեն ծնւռում միմեանց նմանն նրինզիցից սրէկ ծնուած հորթը հօ նման չէ ուղղակի Սուռէյից բերուած իմ սիրելի կովի սիրուն բիժուին նրանք իրար նման չեն:

\*) Գերմանիալի Հեսէն իշխանութիւնը ամենից շատ զինուոր էր գարձու տայիս անդիմացիներին, և Հեսէնցի<sup>\*\*</sup> հայնուական խօսք էր ամերիկացու բերանում:

\*\*) Ֆիլազելիքի վեհաժողովը, որ Ռուսօքի, Վօլէէրի և ուրիշ ֆրանսիական փիլիսոփաների գրուածնքերի ազդեցութեան տակ հասարակութան էր բոլոր մարդկանց հաւասարութիւնն ու ժողովրդական կամքի պատութիւնն ու գերիշխանութիւնը:

— Տիտղոսները դատարկ հնչիւն են, —պատասխանեց  
Բրիւսաերը շեշտակի:

Տիրեց լոռութիւն:

— Ոչ, մնացել է դեռ մի ազնուական մարդ, —ասաց  
Վերջապէս գեռահաս աղջիկը, —նա իմ է, նա բնութիւնից ա-  
րիստոկրատ է:

Բրիւսաերը ոչինչ չը պատասխանեց: Գեղեցկունու նեն-  
դաւոր ժպիտից և կօկետ շարժուածքներից հասկացաւ, որ այն  
արիստոկրատ, որի մասին խօսում էր աղջիկը, նրա առջեն էր  
կանգնած և ամուր գրկում էր նրան: Մի քանի բոպէ անցաւ  
այս անխօս գրկախառնութիւնների մէջ:

Այսպիսի նեղ բոպէններին թոյլ կնամարդը միշտ աւելի  
շուշ է ու չփրի զալիս, քան թէ ուժեղ, իմաստուն տղամարդը, և  
այս պատճառով, մինչդեռ կապիտանը ամբողջովին անձնատուր  
էր եղել համբոցների արքեցնող երջանկութեանը, Տանկֆելլան  
լուց ազգարակի գանակի ճոռոցը և նկատեց, որ լուսինը արդէն  
շատ է բարձրացել երկնքում և շատ պայծառ է լուսաւորում:

— Պատմեցք ինձ, Ալլան, ամենը, ինչ դուք անում էիք,  
ամենը, ամենը, —ասաց նա քնքոյց, բայց հաստատ կերպով ա-  
զատուելով Բրիւսաերի թեւերից և ցոյց տալով նրան տեղ իր  
կողքին՝ պատի վրայ:

Աղջիկը նայում էր նրան իր սիրունիկ աշքերով, ան-  
կեղծ, բոցավառ, մանուկի պէս վատահացող աշքերով, որոնք  
կարծես ամեն մէկին ասում էին. «Միրտս բաց է, թող քո  
սիրոն էլ բայց լինի»:

— Դործերը աւելի և աւելի վատ են գնում, Տանկֆելլա, —  
պատասխանեց կապիտանը դէմքի նախկին անբաւական արտա-  
յայտութեամբ, —մենք կորչում ենք: Վեհաժողովը ոչինչ չի ա-  
նում, իսկ Վաշինգտոնը անընդունակ է երկիրը դուրս բերելու  
այս նեղ վիճակից: Փոխարէն Ֆիլադելֆիա գնալու և Հանկօկի  
ու Ալբանսի<sup>4)</sup> ձեռքի տակ գտնուած ստորագրչ ամբոխի վրայ  
սուիններով յարձակուելու, նա նամակներ է գրում:

— Յիմար ձերունի, բթամիտ ձեւամոլ, —բայցականչեց Տանկ-  
ֆելլան: — Իսկ մէկ նրա կնոջը նայէք: Միսս Ֆօրդը, միսս Բէլին  
ու Մօրիս կօմսութեան ուրիշ արիստոկրատուհիք գնացել էին  
նորին զերաղանցութեան մօտ, զարդարուած իրանց լաւագոյն  
զգեստներով, ինչպէս վայելչութիւնը պահանջում է: Գններալի  
կինը նրանց տանու շորով ու գոգնոցով է ընդունել, վայելուչ

<sup>4)</sup> Սրանք դրդանեցին Ֆիլադելֆիայի ժողովուրդը միութեան կող-  
մակիցների գէմ:

ընդունելութիւն է, ինչ տաեմ Սակայն բոլորն էլ զիտնն, որ տիկինը անսպասելի կերպով երեւացել է այսօնեղ իր փայլիքան վիրգինեցի կառակերների հետ, որպէս դի տեղն ու տեղը յանցանքի մէջ բռնի գեներալին, որը այսահեղ պարահանգէաներ է աւալիու հաւ բաներ են երևի կատարուում այդ պարահանգէաներին:

— Այդ բոլորը դատարկ բամբասանք է—պատասխանեց կապիտան Բրիւստերը—զենքերալը այդ հասարակականն պարահանգէաները տալիս է մագները հանգստացնելու և սովաներին զրուանգը պատճառելու համար Խնքը այնա ամսական եմ լինուած Խնձ համար զգուելի է պար զար այն ժամանակ, երբ հայրենիքը վանագի մէջ է Այս, Տանկիվելու, մենք սասափի պէտք ունենք մի ընդունակ տառչնորդի Կոնկեսիկուտցիք այդ լաւ են հասկանում և եթէ նրանք ինձ վրայ են մահանացոց անում, պատճառն միայն այն է, որ զիտնն իմ հայրենստուիրութիւնս և թէ որքան գոհարերամիւն եմ արել հայրենիքիս համար Երանց յայտնի է, որքան բան եմ ես կրել:

— Ներեցէք ինձ, Ալլան,—բացականչեց գեռահաս աղջիկը քնքոյց կարելեցութեամբ նրան նայելով—մոռացայ էլ... գուցէ դուք, սիրելիս, քաղցած էք:

— Ոչ,—պատասխանեց Բրիւստերը մոայլ սակաւապետութեամբ,—թէ արդէն ահա մի շաբաթ է, որ միս չեմ դրել բերանս:

— Զեզ համար բան ման եմ բերել,—շարունակեց Տանկիվելան, կուսնալով և մի զամբիւղ մատուցանելով կապիտանին, — ահա մի զոյզ վասիկ, որ ինքը զօրապետը ոչ մի փողով չէր կարողանայ զնել Ես սրանց պահում էի իմ հրամանատարիս համար: Զամբիւղի մէջ նոյնպէս մի աման կայ ձեր սիրած անուշեղչնից և մի կտոր ապօւստած բուղ: Դուք միշտ հաւանում էիք այս ապօւստաՅ: Տէր Աստուած, երբ պէտք է լինի, որ հանգիստ սեղան նստենք մեր սեփական տաներ Ե՞րբ պիտի վերջանայ այս սարսափելի պատերազմը: Աւելի լաւ չէր լինի—աւելացրեց նա, նայելով քնքոյց աղերսանքսվ կապիտանի վրայ, — վերջ զնել սրան: Գէորգ Թագաւորը այնպէս վատ մարդ չէ, ինչպէս ասում են. ճշմարիտ չէ: Հաւատացած եմ որ քեզ հետ, սիրելիս, նա չուտով կը կարգադրէր բոլոր գործերը, առանց Վաշինգտօնի պէս մարդկանց միջամտութեան, որոնք մարդուն սովամահ են անում: Եթէ թագաւորը ճանաչելիս լինէր ձեզ, Ալլան, ի հարկէ, յօժարութեամբ կը լսէր ձեր խորհուրդը և կ'անէր ամեն բան, ինչ որ հարկաւոր է:

Ասելով այս, նա յանձնում էր կապիտանին զամբիւղի մի-

Հիշ բոլոր բերած ուտելեղէնները, իսկ կապիտանը կոխում էր  
իր գրպանները:

—Ես իմ մասին չեմ մտածում, հնգիս,—ասում էր նա, —  
բայց ես որոշ պարտականութիւններով կապուած եմ հայրենա-  
կիցներիս հետ, Կօնեկտիվուտի հետ և գուցէ նեղ բռպէին հար-  
կադրուած լինեմ ծայրայեղ միջոցների դիմելու ընդհանուրի օգ-  
տին: Ես հրամանատարութեանը չեմ ձգտում, բայց...

—Երանի թէ դուք լինէիք զօրքի հրամանատարը, —բայց  
կանչեց Տանկիվելլան, —երկու շաբաթից յետոյ հաշտութիւնը  
գլուխ եկած կը լինէր:

Առնեն շողոքորթութիւն, որքան էլ սա հրէշաւոր լինի,  
աղամարդը ընդունում է հրճուանքով և հաւատով, եթէ լսում  
է իրան սիրող կնոջից, որը իր համոզմունքով, բոլոր ուրիշ  
մարդկանցից լու է հասկանում նրա գաղտնի արժանաւորու-  
թիւնները, իսկ երբ այս շողոքորթութիւնը արտասանում են  
դեռատի, ալ, գողգոջուն շրթունքները, սա նոյնչափ անպայման  
արգարացի է թւում, որչափ հետարգների անաշառ դատաս-  
տանը: Այս պատճառով կապիտանը ինքնագոն կերպով ժպապաց,  
զգուշութեամբ ծոցը դնելով վասիկները:

—Դեհ, Ալլան, այժմ ժամանակ է որ գնաք, հայրս երեւի  
արդէն նկատել է իմ բայցակայութիւնը, —ասաց միսս Բլոսօմը  
այն կեղծ-մայրական ձայնով, որ գործ են ածում մինչեւ ան-  
դամ շատ մատաղահաս օրիորդներ իրանց երկրապագուների  
նկատմամբ, —զնացէք, սիրելիս: Դուք կը գաք չորեցար-  
թի: Չը համարձակուեք այցելել միսս Ջուդիտին և շրջեցնել ջա-  
հիլ ազջիկներին ձեր ձիով: Եւ որ զիսաւորն է, հաղորդեցէք ինձ  
եր նորից սովոր կը լինէք:

Սիրով ու անհանգստութեամբ լի հայեացքով նայեց նա  
կապիտանին, որ նրան զրկեց այնքան բոցավառ կերպով,  
որքան այս թոյլ էին տալիս նրա գրպանները լինող ձուերը,  
վասիկները և անուշեղինի ամանը: Մի քանի բովէից յետոյ  
նրա ձիու ոտնաձայնը լսուեց ստուցի շերտով ծածկուած ճա-  
նապարհի վրայ:

Բայց հասաւ նա հարեւան լեռան գագաթին թէ չէ, երկու  
ձիւուր նրա ճանապարհը կտրեցին.

—Կապիտան Բրիւտոնն էք, եթէ լուսնեակը ինձ չէ խա-  
բում, —ասաց նրանցից մէկը, սիրալիք կերպով ողջունելով.

—Այո, իսկ դուք մայօթ Վան-Ցանդտն էք, եթէ չեմ սը-  
խալում:

—Բոլորովին ճիշտ է: Շատ ցաւում եմ, կապիտան Բրիւ-  
տոն, որ պէտք է ձեզ ձերբակալեմ:

— Առաջ հրամանով  
— Զօրապետի  
— Խնչի համար  
— Անհնազմնոց լինելու և իշխանութիւնը չը յարդերու համար:

Սուրբ, որը կապիտանը հանել էր պատեանից ձիւսոր-ների անսպառելի մօտենալուն պէս, գողաց նրա ձեռքին, բայց մի բազէւմ նա կտրելոց այս ոսւրը իր թամբի զիսի վրայ և կտրները՝ չպահանջմայօրի ոտների տակ:

— Ես հետեւում եմ ձեզ, — արտասանեց նա մոայլ կերպով:  
— Կապիտան Բրիւսեր, — առաց շատ լրջօրէն մայօր Վան-Յանդաք, — այսպիսի ցաման և զայրացմի վանդաւոր հետեւանքները չը պէտք է որ ես ձեզ մատնացոյց անեմ, բայց տեսէք, ինչպէս վեասուել է զրանից ձեր պաշարեղէնը: Դեռ, առաջ:

Բրիւսուերը հայեացքը իջեցրեց և տիսուալով տեսաւ, որ անուշեղէնը, Տանկիւլլայի ազգ անդին ընծան, կամաց ծլում էր ձիուու:

II

Միսս Բլօսօմը սպասեց մինչեւ կապիտանի անհետանալը և յետոյ կամաց անցաւ ծառերի ստուերով մինչեւ ադարակի յետեւի գուռոր Աննկատենի կերպով տուն մտաւ սանդուխով վազեց իր սենեակը տանիքի տակ, ուր մի փոքր առաջ վառւում էր ճրագրը Նա նորից մոմը վառեց, գրեց կօմօդի վրայ և, մօտենալով հայելուն, սկսեց ուղղել բարձր հղիւրէ սանրը, որը ցած էր իջել կապիտանի զրկախառնութիւնների ժամանակ, և առասարակ, իրքի ճշմարիտ կին, միջոցներ ձեռք առաւ այն ամեն հետքերը ոչնչացնելու, որոնք կարող էին վկայել նրա երկրպագուի քնքութիւնների մասին: Այսանդ պէտք է նկատենաք, որ աղամարդը յաճախ վերադառնում է իր սիրուհու տեսակիցութիւնից ցրուած, բարկացած, ամօթահար, յաճախ մոռանում է թափ տալ իր բաճկօնի վրայից կոճակին վաթաթուուած շիկահեր մազք: Բայց նայեցէք սիրուն կատուին, որը հէնց նոր խմել է մի ամբողջ սերով՝ կաթնաման, նրա մաքուր դըն շիկը և թափչէ թաթիւնները ոչ ոքի մէջ կասկած անգամ չեն արծարծի, թէ ինչ յանցանք է կատարել:

Դեռահաս աղջիկը զոհ մնաց նրանից, ինչ որ տեսաւ հայելու մէջ, և իրաւունք ունէր. թէեւ հագածը պարզ չթից էր կարուած, վզի մօտ հաւաքուած ու իջնում էր կարճ, զորշագոյն

Քլանելէ շրջադգեստի վրայ, բայց նրա նազելի գլխիկն ու բարակ ոտիկը ճարմանդաւոր հաստ կօշիկի մէջ էլ պարզ ցոյց էին տալիս, որ նրա մնաղած, ծածկուած հրապոյրներն էլ նոյնչափ դիւթիչ էին:

Ուզզելով իր հագուստը, Տանկիմելլան դուռը բաց արեց, ականջ գրեց և սանդուխով կամացուկ իջաւ ներքեւ: Դաշտում մութ էր և միայն հիւրատուն տանող դռան տակից երեւում էր լոյսի շող: Նու մի բոպէ կանդ առաւ, վարանելով՝ գնայ արդեօք տակի առաջ թէ՝ ոչ, բայց յանկարծ զգաց, ինչպէս մէկը իր ձեռքից բռնեց ու տարաւ հարեան սենեակը: Այնտեղ էլ մութ էր. լսուեց կայծաքարի շրխկոցը և վառած մոմի լոյսով գեռահաս աղջիկը իր առջեւ տեսաւ հորը, որ մի ալեոր, կնճոռտ, մօտ վացունամնայ ծերունի էր:

—Դուք բարեհաճն էք զքօսնելու, միսս—ասաց նա, բաց չը թողնելով աղջկայ ձեռքը:

—Այս:

—Եւ մնակ,—աւելացրեց բարկութեամբ հայրը:

—Ոչ, մնակ չէի,—պատասխանեց գեռահաս աղջիկը մի ժակարտ, որը սկսուելով նրա շագանակագոյն աչքերից, աստիճանաբար անցնում էր ջքնաղ շրթունքներին ու սպիտակ, փայլուն ատամներին:

—Ո՞ւմ հետ ուրիմն,—հարցրեց ծերունին, զգալով որ իր կատաղութիւնը թուլանում էր նրա հմաքների ազգեցութիւնից:

—Ես կոնեկտիկուտի զնդի կապիտան Ալլան Բրիւստերի հետ էի, —պատասխանեց Տանկիմելլան, նստելով սեղանի վրայ և խաղացնելով իր սիրուն ոտիկները:

—Նրա հետ:

—Այս:

—Բայց չը որ ես արգելել եմ ձեզ, միսս, տեսնուել այդ մարդու հետ:

—Կը տեսնուեմ նրա հետ, երբ և որքան որ ուզենամ, հայրիկ, —ասաց գեռահաս աղջիկը, յամարձակութեամբ ձեռքը կանթելով:

—Տանկիմելլա Բլուսմ:

—Աքներ Բլուսմ:

—Տեսնում եմ՝ դու չը գիտես, ինչ վատ անուն է հանել նա, —ասաց ծերունին, փոխելով հայրական բարկացած եղանակը ընկերականի, —նրան մեղադրում են որ զինուորներին ապատամբութեան է գրգռում և դաւաճանում ազգային գործին:

—Իսկ որ օրիցն է որ զուք, Արներ Բլուսոմը, այդպէս նուիրուել էք տղգային զործին: Գուք չէիք որ հրաժարաւեցիք զինուորակնն զործականին այլտպէս պաշար մատակարառ թվաւ, մինչև որ կրկնակի զին չը տան: Գուք չէիք, որ ինձ զովում էիք, որ ես համակարծիք չէի միսս Ֆօրդի քաղաքական հայեացքներին:

—Սո՞ւ, —ընդմիջեց նրան հայրը, ձեռքով ցոյց տալով հիւրատոն գուսր:

—Ասո՞ւ, —կրկնեց զեսահաս աղջիկը չարացած, —չնա կոմնում, որ ինձ սուս կացնեն: Ամենքը պատմ են՝ սուս, կամաց, Ալանը, զուք, այդ ինձ արդին ձանձրացրել է: Միթէ աշխարհիս երեսին մի մարդ չը կայ, որ ինձ վրայ չաղաղակի սուս:

—Անմիտ, յիմար աղջիկ ես, Տանկիվելլա, և այդ պատճառով քեզ պէսք է ամեն քայլափոխին զօղել:

Տիրեց լուսիթին, բայց շուտով միսս Բլուսոմը վայր թառ սեղանի վրայից և, բանելով հօր ուղինդուսի կոճակից, կասկածական հայեացքը շեշտեց նրա վրայ:

—Ինչու զուք ինձ ներս չը թողիք հիւրատոն ի՞նչու ըերիք այսանզ, —հարցրեց նա:

Մերունին շուարած մնաց:

—Երա համար, որ... զու զիտես, կոմսը... սկսեց նա, բայց Տանկիվելլան ընդմիջեց նրան:

—Վախենում էք, չը լինի թէ կոմսը իմանայ իմ տեսակցութիւնները կապիտանի հետ: Լաւ, իսկոյն կերթամ և կասեմ նրան:

—Ի՞նչու գու այդ չասացիք աւելի առաջ, երբ զնում էիք հիւրատնից: Սակայն, բոլորը մէկ է: Ես քեզ կանզնացը ոչ այդ պատճառով: Կոմսը հետը մի երիտասարդ է բերել և նրանք իրար հետ խօսում են մի ինչ որ օտար լեզուով, երեւի, իտալիրէն:

—Ո՞րտեղից է սկել այդ պատճանին, —հարցրեց Տանկիվելլան, երկիւլ կրելով, մի զուցէ այդ անսպասելի հիւրը իրան տեսած լինի կապիտանի զրկի մէջ:

—Քաղաքից:

—Ի՞նչ կայ ուրեմն:

—Աւելի լաւ չի լինի, որ մի քիչ զուգուես, —ասաց հայրը, —նա վայլուն ֆրանտ է, քո զաւառական երկրպագուների հատը չէ:

—Ո՛չ, —պատճախանեց Տանկիվելլան, լիովին համոզուած, որ իր համեստ զգեստով էլ հրապուրիչ էր:

Ներունին նայեց նրան և լուռ համաձայնուելով նրա անվիճելի գատավօնի հետ, բոնեց նրա ձեռքից և տարաւ հիւրատուն:

—Իմ աղջիկս, միսս Տանկիֆելլա Բլոսօմ, —ասաց նա, բաց անելով գուռը:

Դեռահաս աղջկայ երեալուն պէս սենեակում լսուող բարձր ձայները լուսոյին և վառարանի մօտ նստած երկու ջենտլմէնները շտապով վեր կացան:

—Ի՞նչ բախտաւոր ենք, որ չնորհ բերիք մնդ մօտ, միսս Տանկիֆելլա, —ասաց նրանցից մէկը ականջը ծակող օտարազգի արտասանութեամբ, —ևս արդէն յոյսս կտրել էի ձեղ տեսնելու. իմ բարեկամ բարօն Պօմպօզան նոյնպէս:

Բարօնը ժպտալով խորին ողջոյն առեց, իսկ Տանկիֆելլան խոնարհեց, այն ժամանակուայ սովորութեան համնմատ, աջ ոստի շրջան զծելով: Մի հայեացք բաւական էր, որ բարօնը հրճուանքով լցուէր նրա փոքրիկ ոտիկից, նազելի կազմուածքից ու հրապուրիչ գէմքից. իր հերթին՝ աղջիկնը իսկոյնեթ նկատեց, որ նա շատ զեղեցիկ է և որ նրա զլիսաւոր հրապոյրը վերի աշքերի մէջ է:

—Բարօնը օտարական է, —ասաց Բլոսօմը, ձեռքերը քսելով: —Կրոպական արհստոկրատները սովորաբար ճանապարհորդում են օտար երկիրներում նրանց բնակիչների բարք ու վարքի հետ ծանօթանալու համար: Պարոնը կը գտնի Զերսէում, —շարունակեց Բլոսօմը, զառնալով Տանկիֆելլային, թէն խոյս տալով նրա արհամարհական հայեացքից, —աշխատաւոր մարդկանց, որոնք միշտ պատրաստ են հիւրասիրել ճանապարհորդին և մատակարարել նրան ամեն բան, ինչ որ անհրաժեշտ է, աժան զնով: Այս նպատակի համար նա միայն պէտք է մօտը ուսկի ունենայ, ոչ թէ տեղական փող:

—Ճանապարհորդը ոչ միայն այդ կը գտնի... ասաց բարօնը շտապով: —բայց և զեղեցկութիւն, նազելիութիւն, տաղանդներ և այլն և այլն...

—Եւ առաքինութիւն, —յուշարարեց կոմսը:

—Այն, այն, և առաքինութիւն այսուղի գեղեցկուհիների մէջ: Հաւատացէք ինձ, իմ ազնիւ բարեկամ Բլոսօմ, որ ամեն երկրի մէջ գլխաւորը կանալը են:

Գեներալ Վաշինգտօնը այնշափ բարի է, որ մեզ խոստացել է իր հովանաւորութիւնը, ասաց կոմսը:

—Գեներալը հովանաւորում է ամեն մի յիմարին, ասաց Տանկիֆելլան, շառադունելով: —բայց ոչինչ չը գիտէք արդեօք միսս Պրուդինս Բակստուերի մասին: նրա փեսացուն կնիալ-

հառուցենի զօրաբաժնի մէջ է։ Հաւասացած եմ, որ նա մի աղջնիւ հետինցի է, բնչպէս պատմում է Պրուդենսը, բայց նրա բարը նամակները բանւում են գեներալի հրամանավ, և լեզի վաշինգտոնը ի հարկէ նրանց կարգում է, թէ ի բնչով է Պրուդենսը մեղասոր, որ նրա բարեկամը զէնքը ձեռքին ապահամրուել է վեհաժմովից։

—Այդ պահանջում է հասարակ զգաւշութիւնը, —նկատեց Բլուօմը, անբաւական աշխավ նայելով աղջկայ վրայ, —աղջիկը թեթևամատթեամբ կարող է մի բան լիզուիցը թույնել մեր զօրքի շարժումների մասին, որ անհրաժեշտ է ծածուկ պահել։

—Ետա բնական է, որ աշխատի ազատել իր բարեկամին գերաւթիւնից կամ գարանակալութիւնից, բնչպէս որ այդ անզի ունեցաւ այն գործակալի հետ, որը, ստանալով պաշար...

—Սուամ, —արաւանանց ծերունին, զրկելով աղջկան, —լիզուդ ոսկոր չունի՞ Սա, իբրև կնամարդ բան չի հասկանում քաղաքականութիւնից, —շարունակեց նա, զիմելով հիւրերին, —մանաւանդ որ բազմաթիւ սիրելի մնանաւորութիւնների կորուստը կատաղացրել է սրան...

Արտասանեց այս խօսքերը թէ չէ, իսկոյն արդէն ափսոսաց, որ լիզուից սրանց թացրեց, որովհետեւ երկիւզ էր կրում, չը լինի թէ արդարասէք Տանկիֆելան երեան հանի իր յարաքերութիւնները կապիտանի հետ Բայց, նրա մնագոյն զարմանքից, աղջիկը ոչինչ չը պատասխանաց և մինչն անդամ մի փոքր կարմրեց։

Այսանդ խօսակցութիւնը փոխունց և Բլուօմը սկսեց խօսել կոմիի հետ պատերազմի հետահանքների, զօրապետի գործողութիւնների, վեհաժողովի գրութեան և այլ այս օրինակ բաների մասին։ Սենետակի միւս անկիւնում Տանկիֆելան խօսում էր բարօնի հետ Մօրիստառնի հասարակաց պարահանդէմների մասին, նրա մասին, թէ ումն էին համարում քաղաքի մէջ առաջին գեղեցկունի, ճշմարիտ է՝ որ լեզի Վաշինգտոնի մազերը ալեզարդ են, ինքը զօրապետը ընկած է միաս Հայնի յետելից, իսկ նրա երիտասարդ աղիւտանտ մայօր Վան Ցանդուրը լրջօրէն է սիրահարուած գեներալունու վրայ՝ թէ իբրև իր մեծաւորի կնոջ, նա միայն սիրամիր է նրա հետ։ Այս խաղաղ ժամավանառութեան միջոցին յանկարծ լսուեց քամու սաստիկ ոռնաց, և Բլուօմը մօտենալով զրսելի գուանը, յայտարարեց որ սաստիկ ձիւն է զալիս։

Կարճ միջոցում բնութեան մէջ տեղի էր ունեցել զարմանալի փոփոխութիւն։ Լուսինը ծածկուել էր ամպերի տակ և օդը լցուել ձիւնի քուլաներով, որոնց գէս ու գէն էր քչում սաստիկ, մրրկալից քամին։

Միս Բլոսօմը ու բարօնը գնացին յետնի դռան մօտ նոր ողերեւոյթաբանական երեւոյթը դիտելու համար Նայելով իր առջև փոռւած ձիւնապատ դաշտին, դեռահաս աղջկան թւում էր թէ ամրող անցեալը անհետացել է այս սպիտակ ծածկոցի տակ։ Մի ժամ առաջ գետնի վրայ թողած նրա ուսների հետքերը բոլորովին ոչնչացել էին, գորշագոյն շրջապատը, որի վրայ յենուել էր կապիտանի հետ խօսելիս, այժմ սպիտակ էր, անբիծ, մինչեւ անգամ սրահի ուրուագիծը ընդունում մի ինչ որ տարօրինակ, աղօտ, տեսիլական կերպարանք, նղել է արդեօք ինքը այստեղ, տեսնել է արդեօք կապիտանին թէ՝ այս ամենը միայն երազ էր։ Նա չէր կարող ասել։

Յանկարծ քամու սաստիկ բռնկումը թրիսկոցով ծածկեց դուռը, և միս Բլոսօմը յետ ցատկեց երկիւղից։ Բարօնը բռնեց նրա մէջքից ու աղատեց, Աստուած գիտէ թէ ինչ երեակայական վասանգից։ Այս տեսարանը վերջացաւ դեռահաս աղջկայ նեարդային ծիծաղով, բայց քամին աւելի ու աւելի սաստիկ էր փշում, և բարօնը հարկադրուած էր աւելի ապահովութեան համար աւելի ամուր սեղմել նրան դէպի իրան։

Մենակ էին՝ բնութեան ու պատահականութեան կամքին յանձնուած։ Կիսախաւարի մէջ աղջկը բարօնի վրայ ձգեց իր կոկէտ հայեացքները և զարմացաւ, տեսնելով, որ նրա աչքերը նայում էին իր վրայ լրջմութեամբ և քնքչութեամբ։ Նա իրան մի տեսակ տարօրինակ զգաց, քաշուեց, և երբ երիտասարդը կունալով հապեց նրա շրթունքներին, նա մի րոպէ մարեց, բայց յետոյ, կայծակի արագութեամբ, ապտակ տուեց նրան և անհետացաւ շրջապատող մթութեան մէջ։ Մի քանի րոպէից միստեր Բլոսօմը բաց արաւ յետեւի դուռը և, իր մեծագոյն զարմանքին, տեսաւ բարօնին մենակի նրանք վերադարձան երկու սովոր հիւրատուն և այստեղ գտան արդէն Տանկֆելային, որը վերադարձել էր առջեւի դռնով։

Միւս առաւօտ Բլոսօմը վաղ բաղինեց աղջկայ դուռը և, նկատելով, որ նա հազնուած է, թէեւ մի փոքր գոնատ և մռայլադէմ, ասաց։

—Եթէ դու այսպէս վաղ ես վեր կացել, Տանկֆելա, աւելի քաղաքավարի կը լինէր, որ բարի ճանապարհ ցանկայիր հիւրերին, մանաւանդ բարօնին, որը, երեւում էր, շատ էր ափսոսում քո բացակայութեան վրայ։

—Այս ո՞ր ժամանակից ի վեր է, որ ես պարտաւոր եմ պար դալ ամեն մի յիմարի առջև, որի մաքին կը փշի իջեանել ձեր տանը, —պատասխանեց դեռահաս աղջկը, բորբոքուելով։

— Նա շատ սիրալիք էր բեզ հետ, նու աղնուատահմ ջննալմէն է:

— Ի՞նչ տաեմ, լու ջննալմէն է:

— Հօ իրան չը մոռացաւ քեզ հետ,— հարցրեց անսպասելի կերպով ձերտնին, ուղղելով աղջկայ վրայ իր գորշադոյն, սատը աշքերը:

— Ո՞չ, աչ,— պատասխանեց Տանկինը լան, նորից կարմրելով պատի պէս,— բայց ինչ է այդ ձևոքերիդ, նամակը:

— Այս, հաւանական է՝ կոսպիտանից, — տասց թլուսոմք, աւրով աղջկան երեկ տակ ծալուած տամակը, — այս նամակը մի դինուոր բերեց Մաքումդ պահիք, Տանկինը, իմ խորհուրդը, Կոսպիտանը քո հատը չէ:

Դեռահաս աղջիկը գունատուեց և տուաւ նամակը արհամարհական ժպասվ, իսկ երբ հայրը գուրս զնաց սենեակից, նրա գէմքին կրկին երեսոց կարմրութիւն։ Պատուելով նամակը, նա կարգաց հետեւելը:

— Իմ սրախ զանձ, ես ստորաքարչ նախանձի աղջեցութեան տակ զործող բննակալի կալանաւորն եմ։ Անցեալ զիշեր ինձ ձերքակալեցին խօսի ու մտքի աղատութեան համար, որին ես արդէն այնքան զոհ եմ բնել ամենը, ինչ որ կարող է զոհել մի մարդ, բացի սիրուց ու պատուից։ Եթէ իշխանութեան ամրապնդման համար ժողովրդի բոլոր աղատութիւնները ենթարկուած են մէկ մարդու զինուորական ոյժին ու անձնասիրութեանը, տէրութիւնը կորած է։ Ես գտնուում եմ անարդ բանտարկութեան մէջ, մեղազրուելով իշխանութիւնը չը յարգելու համար, թէս մէկ տարի առաջ թողի իմ քաղաքն և յարգուած բարեկամներին հայրենիքիս ծառայելու համար։ Հաւատացէք ինձ, որ ձեզ սիրում եմ, չը նայելով որ գտնուում եմ բռնակալների ձեռքին և գուցէ զլուխս զնեմ կառափման տեղում։ Այս նամակը ձեզ հասցնող մարդը հաւատարիմ ու անձնանուէր մարդ է, այնպէս որ կարող էք նրա ձեռքով առարկել ինչ որ կամննում էք։ Ձեր ձեռքերով ու սիրով նուիրագործուած անուշեղնը խեցին ինձանից բռնակալի վարձկանները, իսկ ապուխտը հաւանական է՝ զօրապետի խոհանոցն է ընկել։ Այս թէ ինչ է նշանակում բռնակալութիւնն—անձնասիրութիւնը։ Մնաք բարով, սրախ զանձ։

Ալլան»

Միսս թլուսոմը կարգաց այս ճոռոմարան, անդրագէտ նամակը մի քանի անգամ և պատառ պատառ արաւաւ Յետոյ նրա մոքով անցաւ, որ այս կապիտանի առաջին նամակն է, որն

ինքը չէ պահպանել, և սկսեց հաւաքել նրա կտորտանքը, բայց մի քանի ժամանակից յետոյ ճմրտեց ու դուրս շպրտեց պատուհանից:

Ամբողջ օրուայ ընթարքում նա շատ յրուած էր և մինչև անգամ սովորականից քմահաճ, միայն, երբ հայրը դնաց Մօրիստառը, նա մի փոքր հանգստացաւ: Կէսօրից յետոյ ձիւնը դադրեց ու փոխուեց անձրեի: Գեռահաս աղջիկը զբաղուեց անտեսութեամբ, որ այդ օր ունէր նրա համար ինչ որ նոր նշանակութիւն: Այս հոգսերի մէջ հասաւ երեկոն, և նա չը լսեց ձիերի արոփիւնը բակում և ձայների ազմուկը դաշտում Գուցէ նա դիտամամբ ուշադրութիւն չը դարձրեց այս բանի վրայ, որով հետև Բլօսօմի ազարակը շարունակ ապաստան էր ծառայում անցեալ զօրքի և կարաւանի համար: Գեներալ Սուլիմանը ու գընդապետ Համբլտոնը յաճախ կանգ էին առնում ազարակում ձիերը ջրելու համար իրանց հետախուզութիւնների ժամանակի:

—Միսս Տակֆելլա, —բայց ականչեց ազարակում ծառայող երիտասարդ նեղը, արթնացնելով գեռահաս աղջկան մոռայութիւնից, —զինուորներ են կանգնել մեր ազարակում օրը անցկացնելու: Նրանք ամբողջ տան մէջ կարգադրութիւններ են առնում, իսկ սպան հիւրատանը գիրք է կարգում, ձգուելով բաղկաթոոի մէջ և ոտները սեղանի վրայ գնելով:

Դեռահաս աղջկայ այտերը ալ կտրուեցին և նա յօնքերը կիտեց: Նա վեր ցատկեց, սա էլ առաջուայ քմահաճ, թեթեւամիտ աղջիկը չէր, այլ խոցուած աստուածուհի: Զեղով հրելով նեղքին ճանապարհից նա վեհութեամբ իջաւ սանդուկով ներքև և բացեց հիւրատան դուռը:

Բուխարու առաջ, հանգիստ բաղկաթոոի մէջ ձգուած, նըստած էր մի սպա: Տեսնելով գեռահաս աղջկան, նա շտապով վեր թռաւ սաստիկ շփոթուած:

—Ներեցիք, —ասաց նա խոնարհ գլուխ տալով, —չէի կարծում, որ տանը մէկը կայ, մանաւանդ տիկինս, ես մայօր վան-Յանդա եմ: Ո՞ւմ հետ պատիւ ունեմ խօսելու:

—Տանկֆելլա Բլօսօմ, —պատասխանեց գեռահաս աղջիկը, տեսնելով մայօրի գէմքից, որ իր գեղեցկութիւնը նրա վրայ մնծ տպաւորութիւն է արել:

—Տանկֆելլա Բլօսօմ, —կրկնեց սպան, կրկն ցոյց տալով յուզմունք, —դուք Աքներ Բլօսօմի աղջիկն էք:

—Ի հարկէ, —արտասանեց նա, —հայրս գնացել է Մօրիստառը և շուտով կը վերադառնայ:

—Նա չի վերադառնայ ոչ այօր, ոչ էլ վազը, միսս Տանկֆելլա, —ասաց լրջօրէն սպան. —Նա կալանաւորուած է:

— Կալանաւորուած, ինչի համար,—բացականչեց Տանկի-  
ֆելլան, հպարտ, կուուի կանչող հայեցք նետերով:

—Թշնամիներին ու լրտեսներին զործակցելու և թագցնե-  
լու համար:

Դեռահաս աղջիկը բոցախառուեց. նա միշեց բարօնի նա-  
խորդ օրը յափշտակած համբոցը, և այնպէս ամօթ զգաց, կար-  
ծես առջեր կանցնած սպան այն տեսարանին վկայ էր Սպան  
Նկատեց նրա խոռվութիւնը, բայց բայտարկեց բոշորովին այ-  
կերպուի.

—Եթէ այգովէս է,—սրատախիսանեց Տանկիֆելլան ձայնը  
բարձրացնելով,—ես ել ոկտաք ձեռքակալուն, հօրս հիւրերը և իմ  
հիւրերն են, անս մէջ ես եմ տաճափիկնը և յօմառութեամբ  
ընդունում էր այն պատուաւոր ջենալմէններին: Ասենք՝ նրանք  
լրտեսներ են, բայց նրանք չեին վիրաւորել մի անօպնական  
օրիորդի, ոտները չեին զնել սեղանի վրայ և հիւրատունը ախո-  
ռատուն չեին գարձնել:

Մայօրի գէմքը արտայայտեց միաժամանակ թէ հաճութիւն  
և թէ վիշտ, բայց պատախանելու փոխարէն նա լուռ զլուի  
առուեց, որով աւելի կատաղեցրեց միսս Բլուօօմին:

—Իսկ ասացէք, ինդրեմ, ովքեր են այդ լրտեսները և ով  
է մասնիչը:—հարցրեց նա, համարձակ նայելով սպայի աշքե-  
րին,—կարծեմ, մնաք պէսք է զիտենանք, երբ և ինչպէս ենք  
նրանց ընդունել:

—Ձեր հօրը, միսս,—ասաց մայօրը,—վազուց է որ կատ-  
կածում են թշնամիներին համակրելու մէջ, բայց զօրապետը  
մինչեւ այսօր ուշադրութիւն չէր զարձնում զօրքի մէջ չը ծա-  
ռայող քաղաքացիների քաղաքական հայեացքների վրայ և աշ-  
խատում էր մեր կողմը զիւաւել նրանց ազատամիտ արտօնու-  
թիւններով: Սակայն, նորերս յայտնուեց որ երկու օտարական-  
ներ, թէեւ զօրապետից անցաթուղթեր ստացան, յաճախ այցե-  
լում էին ձեր տունը կեղծ, հնարովի անուններով:

—Դուք ասում էք կոմս Փերդինանդի ու բարօն Պօմպօ-  
զայի մասին,—ընդմիջեց նրան Տանկիֆելլան,—ձեզ ինչ գործ,  
եթէ երկու ազնուատոհմ ջէնալմէններ պտտում են մի դեռահաս  
աղջկայ շուրջը, որը գուցէ նշանաւոր ծագումից չէ, բայց աղ-  
նիւ է...

—Յարգելի միսս Տանկիֆելլա—բացականչեց մայօրը խո-  
նարհ զլուխ տալով և ժպատալով, որից դեռահաս աղջիկը պատ-  
րաստ էր ճագելու,—ապացուցէք այդ իրողութիւնը,—իսկ այս  
դժուար չէ ձեզ համար, ձեր դեղեցկութեամբ հանդերձ,—և  
միստեր Բլուօօմին իսկոյն կաղատեն: Զօրապետը ջենալմէն է,

ինքն էլ և նմթարկում է կանացի ազդեցութեանը և երբէք թե-թեւամտութեամբ չէ վերաբերուել այս ազդեցութեանը:

— Իսկ մատնիչն ովէ է.—հարցրեց բարկութեամբ Տանկիւ-լան—ովէ համարձակուեց...

— Մասնիշը ինքն էլ ձեռքակալուած է. կապիտան Ալլան Բրիւսաերն է, Կօնեկտիկուտի գնդից:

Տանկիւլան գունատուեց, յետոյ բորբոքուեց և նորից գունատուեց.

— Այդ սուտ է, ստորաքարշ սուտ,—ասաց նա, մօտենա-լով մայօրին:

Վան-Ցանդտը լուռ գլուխ տուեց: Դեռահաս աղջիկը շտապով վեր վազեց իր սենեակը և մի քանի րոպէից վերադարձաւ ամազօնուհու զգեստը հագին և զլիարկով:

— Կարող եմ հօրս մօտ գնալ,—հարցրեց նա, աչքերը սպայի վրայ չը բարձրացնելով:

— Դուք ազատ էք թոչնակի պէս, միսս,—պատասխանեց մայօրը,—ինձ ոչ թէ միայն չէ հրամայուած ձեզ ձերբակալել, այլ նոյն-իսկ ձեր անունը յիշուած չէ հրամանազրիս մէջ: Թոյլ տուէր ինձ ճանապարհ ձգել ձեզ մինչեւ ձին:

Տանկիւլան ոչինչ չը պատասխանեց և դուրս գալով հանողիսաւոր մուտքից թռաւ ձիու մէջքը, արհամարհանքով խոյս տալով մայօրի մնկնած ձնոքից:

— Սպասեցէք մի վայրկեան, միսս Բլոսօմ,—ասաց նա, բռնելով նրա ձիու սանձից:

— Թողէք, —ազազակեց աղջիկը բարկացած:

— Մի վայրկեան,—կրկնեց մայօրը, բայց չը թողնելով սանձը ձեռքից:

Զին ծառս եղաւ, քիչ մնաց հեծնողին վայր էր ձգում: Տանկիւլան շարութիւնից ալ կտրուեց և ամրող ոյժով զարկեց մըտրակով յանդուզն սպայի երեսին: Սա իսկոյն բաց թողեց ձեռքից սանձը: Նրա գէմքը գունատ էր, բայց հանգիստ, չը նայելով այն կարմիր գծին, որը խազել էր նրա գէմքը քունքից սկսած մինչեւ կզակը:

— Ես բոլորովին չէի ուզում ձեզ պահել,—ասաց նա ցածր, բայց կամենում էի ձեզ ինդքել որ խօսելով գեներալ Վաշինգտոնի հետ դուք ասէք, որ մայօր Վան-Ցանդտը չը զիտէր որ դուք տանն էք, մինչեւ որ դուք երեւացիք հիւրատանը, և այն ժամանակ նա վարուեց ձեզ հետ, որպէս վայել է սպային և ջենտլմէնին:

Ոչ մի ուշադրութիւն չը դարձնելով նրա խօսքերի վրայ, Տանկիւլան արագ ալացաւ, իսկ մայօրը վերադարձաւ տուն:

Այս տեսարանին ներկայ գանձուող մի քանի սպաները շուռ եւ կան իրանց սպայից, որը այսպիսի վիրաւորանք էր սատցեր, և երբ նու անհետացաւ, սկսեցին բարձր ձայնով իրանց կարծիքը յայաներ.

— Տօրիսկան <sup>4)</sup> սատանան կատագում է որ չէ կարսդ մայօրին էլ խելքահան անել, ինչորէս որ խելքահան է արել կապիտանին, — նկատակ սերժանտ (աւագ-զինուոր) Տօրիներ,

— Քնաց բախտաբ փորձելու զններալի մօտ — աւելացրեց զինուոր Հիկաս.

Գուցէ, այս երկու քննադատները սփառում էին: Գլխասպասառ պանակով Մօրիսատաւնի ճանապարհով, Տանկիւլլան մտածում էր շատ բաների մտախն, նախ և առաջ նրա մոքերը կանգ էին տանում Ալլանի վրայ, որը ի հարկէ սպասում էր իր օգնութեանը, բայց ինչորէս է համարձակուել նա մասնել կամ կասկածել իրան: Յետոց գանձութեամբ մտածում էր կոմսի ու բարօնի մասին և փափագում էր երես առ երես հանդիպել վերջինիս հետ և ուզգակի մեղադրել նրան, որ նա էր իր սոլոր անբախտութիւնների ու ստորութիւնների պատճառը: Վերջապէս նա սկսեց մտածել իր հօր մասին և այս բողէներին առում էր ամենքին Բայց ինչի մասին էլ մտածէր, — երկիրով էր կրում իր հօր համար, զայրանում էր բարօնի վրայ, թէ անհամբերութեամբ սպասում էր Ալլանի հետ տեսակցութեան, — մի պատկեր շարունակ կանգնած էր նրա աշքերի առաջ — մայօր Վան-Ցանդտի գեղեցիկ, գունատ դէմքը կարմիր սպին դէմքի մի ծայրից մինչեւ միւար:

### III

Միսս Բլուօօմի շառատ ձիուց շատ աւելի արագ սլացող քամին մրրիկի փոխուեց, երբ աղջիկը հասաւ Մօրիսատաւն: Նա զօղանջում էր թիւկեների տերեազուրկ կատարների մէջ, սուլում էր թէղօջների չոր ճիւղերի մէջ, հառաջում էր պրեսվիտերեանական խաղաղ գերեզմանատանը, կարծես ճիգ թափելով մեռելներին արթնացնելու, երերում էր վարագոյրները Հասարակաց Փողովարանի պատուհաններում, որտեղ նախորդ որը լայն շրջազգեսանները հաղին գեղեցկուհիք և կարծ ու նեղ վարտիկաւոր կաւալերները հանդիսաւոր կերպով պարում էին

\*.) Տօրի կոչւմ է անզլիւական պահպանողական կուսակցութիւնը Ամերիկական պատերազմի ժամանակ Անզլիւալում կառավարում էին տօրիները:

Հնագարեան անդիմական պարը «սէր Ռօջեր-դը-կովերլի» երդի եղանակով, Բայց ֆօրդի ամրոցի շուրջը, որտեղ գտնւում էր զօրապնտի դլսաւոր դիւանատունը և կացարանը, քամին ամենահրէշտառ կատաղութեանն էր հասել Մռնչում էր, թնդում, սուլում էր և վայրահաջ ոռնում հնագարեան, քառանկիւնի, լայնանկար, տղեղ ամրոցի ժանիքների, դուրս ցցուած անկիւնների ու ճեղքերի մէջ, Ֆօրդեան ամրոցը մի լեռնային, դէպի Վիպանի գետը դիք իջնող լանջի վրայ էր կանգնած, և այս պատճառով բնական էր, որ Մօրիստաւունի փերմների պատշգամբների տակ մնամ չնչող, խաղաղ քամին դառնում էր մի ուժգին հողմ, որից գողգողում էին բոլոր պատուհաններն ու դռները, իսկ ձմեռային քամին խկոյն փոխում էր մրրիկի, որ սպառնում էր երկրի երեսից ջնջել հինաւուրց բնակարանը: Երա սիւնազարդ մուտքի առջն դանդաղ անց ու դարձ անող պահապան զինուորը, փորձով գիտէր, որտեղ էր քամուն ենթարկուած կողմը, և այստեղին մօտենալիս, խնամքով փաթաթւում էր իր թիկնոցի մէջ, որը մի թոյլ պատան էր սուր, հիւսիսային քամուց:

Տան ներմն էլ տիրում էր հիւրընկալութեան և յարմարութեան միևնոյն բացակայութիւնը Ամբողջ տուն պաշարող ցուրտ, ճկնաւորական խաւարը հաղիւ խանդարում էր ընդունարանի բուխտրու մնամ կրակով և սեղանատան օջախում հանգչող ածուխների պսպղումով Հիւսուած աթուներով շատ պարզ կահաւորուած ընդունարանում գրեթէ նիրհում էր զօրապետի սեամորթ թիկնապահը, իսկ սեղանատանը բուխտրու առջն շնչարով խօսում էին երկու սպաներ, վախենալով խանդարել հարեւան հիւրատան ափրող լուսթիւնը, քանի որ այնակ տանող դուռը բաց էր, Բուխարու կրակի գողացող լոյսը աղօտ լուսաւորում էր հիւրատան սև, ողորկած կահ կարասիքը, գրքերի հնագարեան պահարանը, մեծ քառանկիւնի սեղանը, անխօս ճախարակը և բուխարու մօտ նստած անշարժ կերպարանքը:

Այս կերպարանքը այն աստիճան ծանօթ է ամբողջ կըրթուած աշխարհին, անթիւ գրչանկար ու վրձնանկար պատկերների չնորհիւ, որ հարկ չը կայ այստեղ նկարագրեկու: Մեղմութիւնն և ոյժը, փիլիսոփայական համբերութիւնն ու հաստատամիտ վճռականութիւնը սակաւադէպ կերպով միանալով նրա մէջ, ներկայացնում էին մի տիպար, որը վերջը յաճախ ժպիտ էր յարուցանում մեր ժողովրդի շրթունքներին, որովհետև այս ժողովուրդը առհասարակ ացքի չի ընկնում հոգեկան յատկութիւնների այսպիսի միացմամբ, որի խորին իմաստը լիովին հասկանալի էլ չէ նրան, եւ իրան, մինչև անդամ իր արտաքի-

նով, ֆիդիկական գծերի, շարժուածքների ու նոյն-իսկ հաղուստի հաւասարակառութեամբ այս կերպարանքը ցոյց էր տալիս իր սակաւազիւա և բացասիկ լինելով նրա ամերողջ էութեան մէջ ակամայ նկատում էր մի պատկանիր, որը, ճակատազրի ծագրով, կոփւ էր մզում պատկանիրների դէմ, մարդկանց մի հրամանատար, որը տափի էր կանգնել պաշտպանելու՝ նոյն այդ մարդկանց ունեցած ինքնազգութ հրամայելու իրաւունքը, բայց որը մինչոյն ժամանակ հրամայում էր իր իր բնածին իրաւունքով, նրա զիմի զագաթից սկսում մինչեւ կօշիի արծաթէ ճարմանդը, այնքան վեհ, այնքան արքայական բան կար, որ զարմանալի չէ, եթէ Գէսորդ Անդիկականն ու Հանումիւրականը նրա հետ կուռելու համար լաւագոյն միջոց էին համարում այն արհարմարհական ժամանակաբը, որով զոչում էին նրան «ապ, Վաշինգտօն»:

Նա խորասուզուած էր այնպիսի խոր մտածմունքի մէջ, որ զլուխը չը բարձրացրեց, երբ փողոցում լուսեց ձիու ոտնաձայնը և հնչեց սկզբում սպահապանի կոչը, յետոյ հերթապահ սպայի հարցավննութիւնը, զրսի զուան ճռոոցը, կանացի զգեստի սօսափիւնը և ձայների շշանչը ընդունարանում: Վերջապէս, մինչև անգամ երիտասարդ սպայի հիւրատուն մտնելն ու զօրապեսի հէնց բազկաթուին մոտենալը չը սթափեցրեց նրան:

—Ներեցէք, գեներալ, —ասաց սպան անվճռական ձայով, —բայց...

—Ոչինչ, գնդապետ Համիլտօն, —պատասխաննց հանդիսակերպով Վաշինգտօնը—գուշ ինձ չը խանդարեցիք:

—Մի մատաղահաս տիկին կամենում է ձեր գերազանցութեանը տեսնել, միսս Տանկֆելլա Բլուօմը, այն Արներ Բլուօմի աղջիկը, որը մեզազրւում է դաւաճանելու ու թշնամիներին գործակցելու մէջ, և այս բանի համար այժմ ձերբակալուած է:

—Տանկֆելլա Բլուօմ, —կրկնեց հարցական եղանակով Վաշինգտօնը:

—Ձեր գերազանցութիւնը երեխ յիշում էր այն դաւառական զեղեցիկունն, Մօրիստաունի Կրեսիդին, որը ճանապարհոց հանել է Կօնեկտիկուտի քաջ կապիտանին...

—Դուք, գնդապետ, որպէս երիտասարդ մարդ, աւելի լաւ պէտք է յիշէք, —պատասխանեց Վաշինգտօնը ուրախ ժափտով, որը կարմրացրեց աղիւտանտին, —բայց իրաւ է, ես յիշում եմ այդ պատմութիւնը: Հրաւիրեցէք նրան այստեղ ուղեկցի հետ միասին:

—Նա մենակ է, գեներալ:

—Առաւել ես սիրալիր պէտք է լինենք նրա հետ, —ասաց

Վաշինգտօնը վեր կհնալով և ուղղելով շապկի թեփերը, —սպասել մի տաք նրան, գնդապետ, և թող այստեղ մտնի, ինչպէս եկել է, մննակ:

Ազիւտանտը գլուխ տուեց և սենեալից գուրս գնաց: Մի բոպէից գուն երկու կէսերը բայուեցին միսս Տանկիելլա Բլօսմի առջնու:

Այսպէս գեղեցիկ էր իր պարզ՝ ամազօնուհու հագուստով, պանքան ինքնօրինակ էր նրա գեղեցիկութիւնը և այնպիսի անկեղծ վճռականութիւնն և հաստատակամութիւն էր բուրում նրա ամբողջ էութիւնից, որ նրան դիմաւորող լրջմիտ, մտախոն գեներալը չը բաւականացաւ սովորական ողջոյնով, այլ մի քանի քայլ արեց նրան դիմաւորելու և, պատկառանքով առնելով նրա սառած ձեռքը, մօտեցրեց բազկաթոռին, որից նոր էր վեր կացել:

—Եթէ նոյն-իսկ չը դիմանայի ձեր անունը, միսս Տանկիելլա, —ասաց նա հանդիսաւոր քաղաքավարութեամբ, —կարծում եմ, բնութիւնը ինքը հոգ է տարել ներկայացնելու ձեզ ամեն շնորհմէնին լաւագոյն կողմից: Ինչով կարող եմ ծառայել ձեզ:

Աւագ, գեռահաս աղջկայ շագանակագոյն աչքերի լուսաճահանչ փայլը մարեց զօրապետի հիւրատան կիսախաւարի մէջ և նրա վեհ, պատուելի անձնաւորութեան առջնւ: Պայծառ շինութիւնը, որը նրա այտերն էր ծածկել ներգին յուզմունքից ու քամու հետ մղած արտաքին կառւից, գրեթէ բոլորովին անհետացաւ Սրոտի մէջ եռացող չարութիւնն ու բանակալ զօրապետին կծու խօսքեր տաելու վճռականութիւնը բոլորովին ոչընչացան նրա ներկայութեամբ, և Տանկիելլան մեծ դժուարութեամբ զապում էր արտասուզները, որոնք ակամայ երեւացին սրա գեղեցիկ աշխիների մէջ, երբ նա տեսաւ Վաշինգտօնի իր վրայ ուղղուած ուշագիր, հանդիսա հայեացըը:

—Հասկանում եմ ձեր այցելութեան պատճառը, միսս Տանկիելլա, —շարունակեց նա մի այնպիսի հասարակ, բարի ձայնով, որ խիստ տարբերում էր այն ժամանակուայ սովորական, այխարհիկ վարուողութիւնից կանանց հետ, —այդ պատիւ է բերում ձեզ: Աղջկայ հոգսը հօր մասին, որքան էլ հայրը մոլորուելիս լինէր, լիովին յարգելի է:

Դեռահաս աղջկայ աշխերը փայլեցին, մի բոպէ առաջ դողդողացող շրթունքները ծալուեցին հպարտ, արհամարհական ժապիւտի և նա համարձակութեամբ, բարկութեամբ ասաց, նայելով ուղղակի զօրապետի աշխերին:

—Հօրս մասին չէ, որ ուղում եմ խօսել ձեզ հետ: Նրա

համար չէ որ եկել եմ այսուղ մնակ, զիշերով, այս մրբիկնն նո կարող է ինքը պաշտպանուիր Եկել եմ իմ մասին խօսելու, այն սասրագրարչ զրպարատութեան ամբողջ անհեթեթութիւնը ցոյց տալու, որ բարձուած է ինձ վրայ, մի խեղճ ջահիլ աղջկայ վրայ, և նրա համեստ երկրպագուիր, կապիտան Բրիսուների վրայ Նրան ձեսրական են նրա համար, որ սիրում է ինձ, Տանկիւլա Բլուօմին, որը աչքի չի բակնում քաղաքական ձրդառութեան և բաւոն նախանձախնդրութեամբ դէսի ձեր զործը, կարծես նո պարտական է ձեզանից կամ լուզի Վաշինգտօնից թոյլտութիւն հարցնելու սիրահարուելու համար:

Նո մի բոսէ կանդ տառաւ շունչ քաշելու համար և զուտ կանացի ընազդով նկատեց, որ զօրապեափ գէմքին անդի ունեցաւ յանկարծակի փոփոխութիւն, ինչ որ սան խստութիւն երեաց նրա վրայ Բայց կանացի յամառութեամբ, որին աւելորդ չէր լինի որ երբեմն հետեւինք և մենք, աղամարդիկս, նա չը լսեց, այլ օրափ զուրութափեց ամենը, ինչ որ զուցէ մի ժամփ յետոյ ինքը ստիպուած պիտի լինէր յետ առնել կանացի անյաջորդականութեամբ Համարձակուում եմ աւելացնել, որ թոյլ սեռի այս յատկութիւնն էլ հարկաւոր է որ երբեմն փոխ առնի ուժենդ սեռը:

Ասում են, իբր թէ իմ հայրը, — շարունակեց շատապով Տանկիւլան, — ընդունում էր իր տանը լրտեսներին, որոնց ես — Ներողութիւն եմ ինդրում ձեզանից, գեներալ, և վեհաժողովից, — համարում եմ պատուաւոր, բոլորովին ազնուարը իմ յետեւից ընկած ջենալմէններ Ասում են, այսինքն՝ ամենայն ստորագրութեամբ սուտ են խօսում, իբր թէ իմ երկրպագուն, կապիտան Ալլան Բրիւստերն է մատնել հօրս Եկել եմ այսուղ այս տեսակ զրպարտութեան դէմ բողոքելու, պահանջում եմ ձեզանից, գեներալ, որ զուք քաղաքականութեանը զո՞ն չը բերէք ազնիւ աղջկայ անունը: Ամօթ, անխիդն բան է աւազակների մի խումբ ուղարկել ազնիւ ադարակատիրոջ տունը լրտեսելու, այնպէս որ խեղճ օրիորդը պէտք է վախչի այնտեղից: Այն, ովքեր են նրանք, եթէ ոչ լրտեսներ:

Իրան հասցրած վիրաւորանքների յիշատակից դալրացած, նա համարձակ, յանդուզն կերպով բարձրացրեց իր կարմրատակած, զուրալի գէմքը և այն աստիճան մօտեցաւ մեծ քաղաքացուն, որ երկուսի գէմքերի մէջ երկու բթաչափեց ոչ աւելի տարածութիւն կար: Նրա մեծագոյն զարմանքին, Վաշինգտօնը կամաց կռացրեց գլուխը և սառնասիրտ կերպով համբուրեց նրա ճակատը:

— Նստեցէք, խնդրեմ, միսս Բլուօմ, — ասաց նա հանդիստ

ձայնով, և բռնելով ձեռքից, նստեցրեց բազկաթոռի մէջ,— հանգստացէք և ուշադրութեամբ լսեցէք ինձ։ Սպան, որին յանձնել եմ ձեր հօր ազարակը գրաւել, իմ աղիւտանոտն է և ջննալմէն մէկը։ Եթէ նա այն աստիճան մուացել է իրան, այն աստիճան ստորացրել է իրան և ինձ իր անձի մէջ...»

—Ոչ, ոչ, —ըացականչեց Տանկիելլան տե՛ղային անապարանքով, —այդ ջննալմէնը բոլորովին քաղաքավարի էր ինձ հետ, ընդհակառակը գուցէ ես...»

Նրա հրեսը ամբողջովին բորբոքուեց և չէր կարող նախադասութիւնը վերջացնել, այնպէս կենդանի գծերով ներկայացաւ իրան մայօրի դէմքը՝ մտրակից ստացած կարմիր սպիռվ։

—Հաւատացած եմ, որ մայօր Վահ-Ցանդտը, իբրեւ ջննալմնն, գիտէր ներել աղջկայ բնական բարկութիւնն ու զայրոյթը հօր ձեռքակալութեան լուրը առնելիս, —ասաց Վաշինդտօնը, պարզորշ արտայայտելով իր հայեացքով որ հասկացել է Տանկիելլայի անխօս խօսավանանքը, —բայց թոյլ տուէք ինձ պարզել ձեզ մի ուրիշ հանգամանք, որի մասին մննք կատարելապէս հակառակ կարծէքի ենք։

Նա մօտենաւ գումն և, կանչելով ծառային, մի ինչ-որ բան ասաց կիսաձայն։ Մի քանի բոպէից յետոյ այն երիտասարդ սպան, որը յայտնել էր զօրապետին Տանկիելլայի գալուստը, ներս մտաւ սենեակը պաշտօնական թղթերի մի կապոցը ձեռքին։ Կիսազուսպ ժպիտով նա նայեց գեռահաս աղջկան, կարծես լսել էր նրա ամբողջ խօսակցութիւնը գեներալի հետ և նկատել էր այս տեսարանի մէջ նրա ծիծաղաշարժ կողմը, որը գուցէ խօսափում էր գործող անձանց ուշադրութիւնից։

Սակայն, կանգնելով զօրապետի առջև, գնդապետ Համիլտոնը լրջմտութեամբ սկսեց թղթերը թերթել։ Տանկիելլան շըրթունքները կծոտում էր անխօս շփոթութեան մէջ։ Մի ինչ-որ անյայտ երկիւղ և մի՞ իր համար անպատճեներ բանի նախազգացում յանկարծ տիրեցին համարձակ օրիորդի սրտին, նրա մէջ առաջին անգամ զարթեց այն զիտակցութիւնը, թէ ինքը անօդնական է, մննակ այս երկու պատերազմիկ, արիասիրոտ անձնաւորութիւնների և՝ աննկատելի կերպով հակառակ դռնից սենեակը մտած երկու կանանց մէջ, որոնք հեռուից նայում էին նրան այնալիսի հետաքրքրութեամբ, կարծես նա մի հազուագիւտ տեսիլ լինէր։ Այս ամենին աւելացաւ և այն անհանդիստ միտքը, թէ իր ամբողջ կեանքը և իր ամբողջ երջանկութիւնը կախուած էին յաջորդ մի քանի վայրկեաններից։

—Ահա մեղադրական կէտերը, —ասաց Համիլտոնը, տա-

լով Վաշինգտոնին թղթերից մէկը և միտմամանակ բազմանիշ հայեացք նետերավ ներս մտած աժիքններից մէկի վրայ:

— Կարգացնք, — ասաց զօրապեաք սաւնութեամբ:

Կատարելապէս հասկանալով, որ իրան լսողը միայն միսս Բլոուօքը չէ, Համբլանը կարգաց թուղթը, թղթի լեզուն ակդմուած, զինուորական-գաւառաւանական էր և նրա մէջ պարզ, համասոա կերպավ տառած էր, որ թուղթը սասրագրովին անձամբ ծանօթ տղարակաւէր Արներ Բլոուօքը յաճախ ընդունում էր իր առանք երկու ջնարմինների, կամ Ֆերգինանդին ու մարկիզ սոօմոզային, որոնք կասկածելի անձնաւորութիւններ են, իրարեւ ազգային գործի թշնամիններ և ցամարային զօրքի մասին հակառակորդին աեցիւութիւններ հազորդովներ, թուղթը սասրագրուած էր Ալլան Բրիւսուերի, Կոնսկիտիկուաֆ գունդի նախակին կապիտանի ձեռքափի: Համբլանը ցայց տուեց Տանկինելլային այս սասրագրութիւնը, և գեռանաս ազջիկը խօսին ճանաչեց իր երկրոպագուի ծանօթ ձեռքը:

Նա վեր կացաւ Աչքերի մէջ այժմ նոյնակես պարզ նկատւում էին շփոթութիւն ու կուիծ, ինչպէս մի բոպէ առաջ զայրոյթ: Բայց այնուամենայնիւ նու համարձակ տարաւ բոլորներկայ եղողների հայեացքները, թէեւ գուցէ աւելի թշնամանք էր զգում կանանց անխօս ներկայութեամ, քան թէ տղամարդկանց ամենաարհամարհական բննադատութեան մէջ:

— Ի հարկէ, — արտասանեց մի ձայն, որը Տանկինելլան կանայի անսխալական բնադրով վերադրեց տիկիններից աւագին, որը օրինական իշխանութիւն ունէր ներկայ եղող տղամարդկանց մէկի խղճմտանքի վրայ, — միսս Տանկինելլան կընտրի իր երկրպագուներից, հայրենիկի թշնամիններից մէկին և արդէն նրա մէջ պաշտպանութիւն կորսնի իր նեղ վիճակի մէջ, քանի որ նա, ինչպէս երեւում է, աչքի չէ ընկնում բացառապէս մէկին համակրենովը և ոչ որից չէ խնայում իր բարեհան ուշադրութիւնը:

— Գոնէ, լոդի Վաշինգտոն, նա իր ուշադրութիւնը չէ պարզեւի մի մարդու, որը նրան դաւաճանել է, — ասաց տաքտաք գեռանաս ազջիկը և, նկատելով, որ զօրապետն ու իր կինը զարմանքով իրար նայեցին, շտապով աւելացրեց, — ներեցէք ինձ, միկնդի, իմ համարձակ կարծիքը:

— Ով որ դաւաճանում է իր հայրենիքին, նա հեշտութեամբ կարող է դաւաճանել և իր սիրոյն, — սառն կերպով նկատեց լոդի Վաշինգտոնը:

— Հէնց այդպէս կարելի է ասել նաև՝ ով որ դաւաճանում է իր թագաւորին, կը դաւաճանի և իր հայրենիքին, —